

ԽԱՆՈՒՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

բանասիրական գիյր. թեկնածու

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԻԲՐԵԻ ԱՐԴԻ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱԳԼՅՈՒՐ

«Նայ հանճարին նիւթը՝ բեղմնատրուած քրիստոնէութեան շունչովը,
այս է, կարելի է ըսել, Աստուածաշունչի հայերէն
թարգմանութեան բնագանցական իմաստը»:

Շահան Պերպերեան

Նայրնի է, որ Աստուածաշունչ մարչանը քաղաքակրթության հիմնական աղբյուրներից է, եւ անգնահատելի է նրա դերը ոչ միայն հավատքի, այլեւ պատմության, գիտության, մշակույթի ամենապարբեր ոլորտներում:

Սրանով են թերեւս պայմանավորված Գրքերի Գրքի ընկալումը ազգերի, ժողովուրդների եւ պետությունների կողմից, նաեւ նրա բազմաթիւ ու անընդհատ թարգմանությունները: Մեզ բերնը Շահան Պերպերեանի կարծիքն այն մասին, թե ինչու եւ ինչպէս եղաւ, որ Աստուածաշունչն այլ ազգերի թվում նաեւ «հայ հոգու «ի գործություն» ունեցած հարկությունների միաձուլման ու ծաղկեցման» պարճառը դարձաւ. «Միակ պարասխան մը կա՝ քրիստոնէութեամբ Նայաստան բերված Ավերիսն իսկ... Նայաստան բարձր աշխարհի այդ մարդոց բերված ավերիսը, թե ինչ որ Նայ Նոգին կը սիրեր ամեն բանն վեր, թերեւս սակայն անգիտակցից սիրով մը, իբր լույս բանականության, իբր Նույս Նոգվո, իբր Սեր... այս աշխարհի վրա պարահաբար ապրող վաղանցուկ ու անարմար բան մը չէր... Ստուգություն, թե հայկական լեռներէն շար անդին, բայց իրապէս, եղեր է Մեկը, որ իրենց համար խաչվեր էր, բայց որ իբր աստուածային բանն իսկ վերահայրնվեր էր եւ որու կյանքին ճառագայթած անօրինակ լույսովը այդ ճշմարտությունը ընդմիշտ հանձնված էր մարդոց»¹:

Այդ ավերիսն ու ճշմարտությունն էին թելադրում թարգմանել Աստուծո եւ իր արարածների հաղորդակցման սքանչելի պարզամագիլները:

¹ Տէն Ներսէս ավ. քին. Ներսէսյան, Աստուածաշունչը եւ հայ մշակույթը, Երևան, 2001, էջ 7: Այսուհետև սույն գրքի մեջբերումները՝ շարադրանքի մեջ փակագծերով:

Իսկ թարգմանություններով ժողովուրդների առջև պիտի բացվեր իմաստության անընդգրկելի ընդերքը, քաղաքակրթության ու մշակութային արժեքների անսպառելի աղբյուրն ու հարաբերությունները: Սրանով է **Աստվածաշունչը միշտ նոր ու ժամանակի** հետ չհնացող, ի տարբերություն ամեն ինչի, որ ժամանակի ազդեցությամբ հնանում է, Գրքերի Գիրքը գնալով նորանում է ևս ավելին՝ ժամանակից միշտ առաջ է ընկնում: Եւ քանի որ Աստվածաշունչը Աստծու խոսքն է՝ ուղղված Իր իսկ արարած աշխարհին, այն ինքն է հավաստում, որ գրքերի հեղինակները ներշնչված են եղել Աստծո Նոգով², ուրեմն Աստված մարդկությանն ուղեկցում է Իր նախանշած ժամանակի մեջ:

Աստվածաշունչը, քրիստոնեական Եկեղեցու Սուրբ Գիրքը լինելով, պատմական փաստաթուղթ է, Աստծո ճշմարիտ խոսքը, որի Նին Կրակարանի լեզուն երբայերեն է, իսկ Նոր Կրակարանի գրքերը գրվել են պարզ հունարենով՝ «կոյնե»-ով:

Կրոնագիտական գրականության մեջ³ այս առիթով նշվում է, որ Կովյա լեզուն պատմական չի ընդգրկվել, և եթե Սուրբ Նոգին է Նոր Կրակարանի քսանյոթ գրքերի գլխավոր հեղինակը, ապա հասկանալի է, որ աստվածային լուրը հաղորդելու նպատակով ընդգրկված լեզուն նույնպես փրկչական ծրագրի տարրերից է:

Այսպիսով, երբայերենից և «կոյնե» հունարենից կարարված թարգմանությունները ևս արարչական, փրկչական խորհրդի կրողները պիտի լինեն:

Այս առումով Կրեդին է վկայակոչել նույն գրականության մեջ արված վերլուծությունները լեզվի ծագման մասին: Անդրադառնալով լեզվաբանների համար իբրև հիմնախնդիր մնացած այս հարցին՝ հեղինակը մեջ է բերում Փրկչի խոսքը Նովհաննես առաքյալի վկայությամբ, թե Բարձրյալն իր Նոր պարվիրանն է հայրնում հավիտենական կյանքի մասին. «Ահա թե ինչու այն, ինչ ասում եմ, ասում եմ այնպես, ինչպես Նայրն է ինձ ասել»⁴: Շարունակելով միաբլը՝ հեղինակը նշում է՝ Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ առաջին մարդը՝ Ադամը, լեզուն սովորել է հենց իրեն Արարող Աստծուց: Աստված է իր կարարած գործերին անուններ փոխել և խոսելով Ադամի հետ՝ սովորեցրել է Իր լեզուն՝ բառեր ու դրանց մարմանշած գաղափարները: Աստծո սովորեցրած բառարանը, հասկանալի է, շատ մեծ պետք է լինել, ավելին՝ խոսքն արդեն ոչ միայն բառարանի, այլև լեզվական համակարգի մասին է: Բառի և նրա մարմանշած առարկայի միջև կապը կամայական չէր, այլ՝ Աստծո կամքով ու հաստատմամբ. «Նշված կապի չարաշահումը լեզվի մեկ կամ բազմաթիվ օգտագործողների կողմից Կրար թյուրիմացությունների և հաղորդակցության խզման»⁵: Մարդու միլիոնավոր սերունդներ՝ Ադամից մինչև Նոյ և Նոյից՝ Փաղեկ (Մենդ. Ժ. 25), գործածում էին Աստծո՝ իրենց հայր Ադամին թվադրած բառերը, հնագանդ լինելու դեպքում՝ նաև բառակապացությունները, ինչպես և այն բառերը, որոնք Ադամը գործածել է առաջին անգամ, և որոնք հավանության են արժանացել Աստծո կողմից:

2 Տե՛ս Մ. Բախելոր, Երբ բացում ենք Աստվածաշունչը, Երևան, 1999, էջ 9:

3 Տե՛ս Ա. Գալսայան, Նոր Կրակարանի ընդհանուր ներածություն. «Նավարք և կյանք», Երևան, 2003, էջ 35:

4 Ամդ, էջ 142-143:

5 Ամդ, էջ 35:

Սենաար երկրի խառնաշփոթից հեկտո էլ մարդիկ խոսեցին Ասարծոն պարզեցում լեզուներով՝ «կղզիաբնակ ազգերի (Ծննդ. Ժ. 5), Քամի որդիների (Ծննդ. Ժ. 20), Սեմի որդիների (Ծննդ. Ժ. 31): Կնշանակի՝ Ասարված ինքն է հասարակել Իր սպեղծած յուրաքանչյուր լեզվի բառի եւ նրա բովանդակության կապն այնպես, որ յուրաքանչյուր լեզվախմբի, յուրաքանչյուր ազգի պարկանող մարդկանց հաղորդակցությունն ու նրանց մարերի արարահայրումը մշտապես հնարավոր էին ըստ Ասարծոն ծրագրի⁶:

Նկրեությունն այն է, որ Ասարված ինչպես Ադամի եւ Նոյի հեկ էր խոսել նրանց լեզվով՝ պահպանելով բառի ու նրա մարնանշած առարկայի՝ իր իսկ հասարակած կապը, այնպես եւ Աբրահամի, Իսահակի, Նակորի, Մովսեսի հեկ խոսելու էր իրենց լեզուներով՝ դարձյալ հասարակելով նշված կապը:

Ուսումնասիրողների եզրահանգմամբ կենսական հարցը Ասարծոն հասարակած հարաբերությունները՝ հայրնության լեզվի բառի եւ նրա մարնանշած իմաստի, ինչպես նաեւ տված գուգորությունների կապն ընդունելն ու հարգելն է: Նոյնը վերաբերում է նաեւ բառերի թարգմանությանը, որովհեկն ո՛չ մի կապ, ո՛չ մի բառակապակցություն կամայական է: «Նախնական լեզվի բառի ճշգրիտ իմաստը եւ մյուս լեզվի՝ դրան համարժեք բառերի նման որոնումները դյուրին չեն, սակայն անհրաժեշտ են՝ հնարավորին չափ պահպանելու կապը բառի (որից Ասարված սկզբնապես օգտվել է) եւ հիշյալ ժամանակաշրջանում դրա մարնանշած առարկայի միջեւ»⁷:

Այստեղից պարզ է դառնում Մուրբ Գրքի առաջին թարգմանիչների կարարած գործի բնույթը:

«Թարգմանված լեզուների շարքում, - կարդում ենք համապարասխան գրակաության էջերում, - հայերեն թարգմանությունը գրավում է յոթերորդ տեղը» (էջ 9):

Նեղիմակը թարգմանության նպատակը Ավեարարանի պարգամը հայրնելն էր համարում՝ Նիսուս Փրկչի ծնունդը, կյանքը, մահն ու հարությունը: Նախնախնեքն իմանալու համար պեկք էր թարգմանել Նին Կրակարանի երեսունիներ եւ Նոր Կրակարանի քսանյոթ գրքերը, առանց որոնց անհնար էր թեկուգ ամեն կիրակի պարարագ մարուցել:

Նիշենք, որ Ասարվածաշունչ մարյանի բոլոր գրքերը նույնական չէին կարող լինել ընդգրկումների ոճով, մարեցումներով, ժամանակաշրջանով եւ դրանցից բխող բազմաթիվ հանգամանքներով, սակայն ունեն չափազանց կարեւոր ընդհանրություն՝ արարչագործության նպատակը: Աշխարհի եւ մարդու արարումը, կյանքի գարգացումն արդեն ենթադրում են սերունդները միավորող առանձնահարկություններ:

Սակայն ժողովուրդներին ու սերունդները միավորող չափազանց կարեւոր առանձնահարկություն է նաեւ գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներին վերաբերող գիտական այն հսկայական տեղեկարկությունը, որն առկա է Ասարվածաշունչի բոլոր գրքերում: Կարելի է այդ իրողությունը արժեուրել՝ թեկուգ վկայակոչելով միայն եզրույթների համակարգը, որն ուղղակի բխում է Մուրբ Գրքից:

Դրանով են բացարկվում նաեւ այս եզակի մարյանի բազմաթիվ ու անընդմեջ

⁶ Տեն անդ, էջ 146:

⁷ Անդ, էջ 149:

թարգմանությունները, այլապես իբրև հավարի գիրք՝ այն կարող էր մնալ բնագրային լեզվով. չէ՞ որ Նխուս Փրկիչը խոսել է արամեերեն, Նին Կրակարանի լեզուն եբրայերենն է, Արևելքում գրականության և կրոնի լեզուն ասորերենն էր (արամեերենի մի փարսա-պեսակը), և թրիսպոնությունը ասորերենով է թափանցել մինչև Նոսավոր Արևելք։ Ի վերջո «երկու ձվենի» վերածված Նայասպանում ժամերգությունները կարարվում էին օտար լեզուներով՝ հունարեն և ասորերեն, և ինքնություն գրի, հեղինակաբար ազգային Եկեղեցու սրբոցման ազգամիավորիչ անհրաժեշտությանը հավասար կարևոր էր այդ սբանչելի մաքյանի գանձերը հային մաքչելի դարձնելը։ Նոգետը հայրենիք կառուցելու այդ դժվարին ժամանակաշրջանում՝ իբրև փրկության լույս-արև, ճառագայթեց Մաշ-պոցի և նրա սաների մեծ ջանքերի երախայրիքը՝ Սողոմոնի առակների գրքի թարգմա-նությունը, որի փրկարար պարգամով արժևորվում էր իմաստության և հանճարների մարբերի խորությունը։ Այդ թարգմանությունը նույնքան նշանակալից էր, որքան ինքը՝ այբուբենի գյուրը։ Սահակ-մեսրոպյան այս թարգմանությունը, որ Կորյունի բնորոշմամբ «փութանակի» է, իր նախնական օրինակով մեզ չի հասել։ Ռ. Իշխանյանն այդ առիթով գրում է. «Նայրնի է, որ ամբողջ գիրքը նոր խմբագրության է ենթարկվել 431-432 թվա-կաններից հետո, և նրա լեզվի մեջ մուծվել են նաև շուրջ բառորդ դար արդեն գրավոր օգտագործված սահակ-մեսրոպյան գրական լեզվի մշակութային նվաճումները»⁸։

Լեզվաբանը թարգմանությանն անդրադառնում է հայերենի եզրաշինության հար-ցերի առնչությամբ՝ ընդգծելով, որ այն սկիզբ է առնում առաջին թարգմանիչների «Ա-ռակք Սողոմոնի» գրքի թարգմանությամբ իսկ։

Օրինակների վկայակոչումով նա իրավացիորեն նշում է, որ «Առակք Սողոմոնի» ոչ մեծ բնագրում փեղ են գրել **իրավաբանական, գյուղաբնական, ռազմական, կենդանաբանական, բուսաբանական** և այլ կարգի մի շարք ուրիշ բառեր, որոնք իրենց բնույթով մոտ են **տերմինի** ըմբռնմանը»⁹։

Այսինքն՝ Աստվածաշունչը այսօրվա եզրութաբանության համար առաջաբառիս աղբյուր է։

Անդրադառնալով հեղինակի մեկ ուշագրավ դիտարկման. «Աստվածաշունչում գոր-ծածված մի շարք հայկական անվանումներ այնպիսի բնույթի են, որ ակամայից մարդ մտածում է, թե դրանք հազիվ թե ծնունդ առած լինեն ժողովրդի խոսակցական լեզվում՝ բարբառներում։ Միայն է առաջանում, որ գիտական անվանումների արժեք ունեցող հա-յերեն շարք բառեր ու կայուն բառակապակցություններ բանավոր պաշտոնական (աբե-նական) խոսքում, նաև գրավոր խոսքում կարող են գործածված լինել նաև նախքան Աստվածաշունչի սահակ-մեսրոպյան թարգմանությունը։ Այլ խոսքով՝ հայերեն տերմինա-շինությունը կարող է ավելի երկու լինել, քան 5-րդ դարի սկզբի թարգմանչական շրջանն է»¹⁰։ Նաև ակամայից է, որ փվյալ դեպքում մեզ հեղինակաբար Աստվածաշունչի՝ իբրև գիտա-պարմական փաստաթղթի առանձնահատկության ընդգծումն է, որից էլ գիտությանը

8 Ռ. Իշխանյան, Անվարի հայերենի տերմինաշինության, Երևան, 1981, էջ 11։

9 Անդ, էջ 12-13։

10 Անդ, էջ 11։

պիպանի փաթեթեր հեպտոթյուններ կարելի է անել, ինչպես, օրինակ, «կարևոր է, որ սահակ- մեսրոպյան բառօգտագործման մեջ արդեն առկա է այն ուղղության սաղմը, որով հեպագա դարերում պիպի ընթանային հայերենի բառաշինությունն ու փերմինաշինությունը»¹¹:

Ակնհայտ է, որ Աստվածաշնչի թարգմանությունը հեղաշրջող դեր կատարեց ոչ միայն հոգևոր կյանքի ասպարեզում, այլև գիտության բնագավառում: Սահակ Կաթողիկոսը, Մեսրոպ Մաշտոցը և նրանց գործակցող աշակերտները կոչվեցին թարգմանիչներ: Նրանց գործի նշանակության գիտակցումն ի սկզբանե կար, սակայն «իբրեց կատարած աշխատանքին զուգահեռ նրանց կոչումն աստիճանաբար լայն իմաստ է ստանում: «Թարգմանիչ» բառն սկսում է գործածվել նաև «գիտնական» իմաստով: Նրանց կոչումն է դառնում Աստվածաշնչի և կրոնական ուրիշ գրվածքների միջոցով աստվածային ճշմարտությունը փոխանցել ժողովրդին» (Էջ 13):

Աստվածաշնչի թե՛ գրաբար, թե՛ աշխարհաբար թարգմանությունները բարձր են գնահատվել քրիստոնեական, օրինակ՝ Վ. Գ. Գուդելը նշում է, որ «եթե այդ թարգմանությունը փոխանցվեր չաղավաղված, իր վաղեմությամբ անգնահատելի արժեք կլիներ» (Էջ 36):

Երբ հայերեն Աստվածաշնչի լուրջ ուսումնասիրությամբ զբաղվող ամերիկացի Աջերին հանձնարարվում է Նոր Կտակարանի գրաբար և աշխարհաբար նոր հրատարակություններ պատրաստել, ահա թե ինչ է նա գրում. «Եթե հնարավոր է, կկամենայի խոստովել վաղեմի թարգմանության փոփոխությամբ ազգին վնաս հասցնելուց, թարգմանություն, որի հանդեպ նրանք խորին ակնածանք են փառում, և որը հիրավի արժանի է նրանց հարգանքին... Մի կողմ դնելով ընդօրինակողների որոշ աղավաղումներ, թարգմանությունն իրապես փառահեղ է: Չեմ կարծում, որ այն անգլերեն մեր գերազանց թարգմանությունից ստորադաս է» (Էջ 38):

Իհարկե, շատ կարևոր է մեր իսկ ժողովրդի ակնածանքը Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանության հանդեպ, բայց երկրորդական չեն նաև այլոց կարծիքները, ինչպես Լա Կրոզի, որն այն անվանել է «Թագուհի թարգմանության», իսկ պրոֆեսոր Կոնիքերը գրում է. «Լեզվական գեղեցկության և ուղիղ թարգմանության փառակերպից հայ թարգմանությունը անգերազանցելի է: Հայ թարգմանությունը գրեթե այն արժեքն ունի մեզ համար, ինչ որ հունարեն բնագիրը»¹²:

Բոլորին է հայտնի, թե ինչ արժի բնագրի և թարգմանական փաթեթերակի այսպիսի եզակի համեմատությունը, այսպիսի գնահատականը:

Ու, Բշխանյանը նշված աշխատության մեջ հայոց լեզվի եզրաշինությունն ուղղակի կապելով սահակ-մեսրոպյան թարգմանական գործունեության հետ, գրում է, որ Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցն ու նրանց աշակերտները օտար անունների դիմաց աշխատել են դնել հայկականը: Ուշագրավ է, որ Աստվածաշնչի հունարեն (Յոթանասնից) թարգմանության մեջ մի շարք երբայական բառեր պահպանված են հունական փառա-

¹¹ Անդ, էջ 12:

¹² Ֆ. Կ. Կոնիքեր, Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու, Երևան, 1963, էջ 213:

դարձությամբ (փապան, գայիսոն, յոբելեան): Լեզվաբանը նկատում է մի կարևոր միպտում, այն, որ «հայերենի տերմինաշինության ավանդների տեսակետից ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ դեռևս Ե. դարից հայ տերմինաշինությունը զարգացավ առավելապես օտար բառերը **թարգմանելու** կամ հայացնելու ճանապարհով և ավելի սակավ չափով թարգմանությունից **անկախ, բոլորովին ինքնուրույն** գիտական անվանումներ ստեղծելու ուղիով»¹³:

Լեզվաբանը նշում է, որ երբ թարգմանիչները հայերենում հարմար բառ չեն գտել և չեն կարողացել այդպիսին ստեղծել, նման դեպքերում պարզապես վերցրել են հունական որոշ բառեր, որոնք հաճախ հայերենի հնչական հիմքին են ենթարկված, հայացված են, օրինակ՝ *ergasia* - արգասիք, *ekklesia* - եկեղեցի, *mechanai* - մեքենա, *milion* - մղոն, *talanton* - փաղանդ և այլն: Իրավացիորեն նշվում է, որ նման իրողություններն աննշան փոխոս են կազմում մեծածավալ այս մատյանում, և հիշարակվում է որոշ բանասերների կարծիքը, թե «այդ երևույթները հոյակապ թարգմանության մասնավոր թերություններ են»¹⁴:

Սակայն տերմինների ծագումնաբանության և դրան առնչվող այլ հարցեր սույն հոդվածի նպատակի սահմաններում չեն, պարզապես մեզ հետաքրքրող հայոց լեզվում Աստվածաշնչից և նրա միջոցով անցած եզրությունների մեծածավալ առկայությունն է և եզակի այս մատյանի ու նրա թարգմանիչների անփոխարինելի ազդեցությունն ընդհանրապես հայերենի բառաշինության և մասնավորապես տերմինաշինության ասպարեզում: Այդ ազդեցությունը շարունակական եղավ նաև հետագա դարերում, ընդգրկեց նաև հունարան դպրոցի գործունեությունը, որը, չնայած իր՝ հայերենը հունարենով պարճենալորելու մեթոդի ձգտումներին, տերմինաշինության ասպարեզում նշանակալից դրական դեր կատարեց՝ մանավանդ մի շարք բառակազմական նախածանցներ շրջանառության մեջ դնելով (բաց, մակ, ներ, բաղ և այլն):

Ընդհանրապես եզրաբանության պարմությունը սոսկ լեզվական-լեզվաբանական հարց չէ, այլ անհերքելի փաստ ժողովրդի անցած պարմական ճանապարհի մասին: Ս. Ասլանյանը գրում է. «Տերմինաբանության բնագավառում ավելի հստակ և ակնառու է լեզվի, հարկապես նրա բառային համակարգի կապը Կոլյալ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի պարմության հետ»¹⁵: Շարունակելով միտքը՝ հեղինակը նշում է, որ «այս կամ այն բնագավառի տերմինաբանության պարմությունը վերջին հաշվով ներկայացնում է նաև բնության ճանաչողության և հասարակության զարգացման պարմություն»¹⁶: Այստեղից էլ բխում է, որ «տերմինաբանության պարմությունը ոչ միայն ազգային պարմական պրոբլեմ է, այլև համաշխարհային գիտության ինտերնացիոնալ պրոբլեմ և մարդկային քաղաքակրթությունների և ժողովուրդների մշակութային

13 Ռ. Իշխանյան, Ավանդիկ հայերենի տերմինաշինության, Երևան, 1981, էջ 12-13:

14 Անդ:

15 «Ավանդիկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության», Երևան, 1992, էջ 149:

16 Անդ:

փոխազդեցությունների պարամության պրոբլեմ»¹⁷։ Իսկ փոխազդեցությունների և ներթափանցումների ծավալն ու անփոխարինելի դերը երևան կգան Աստվածաշունչ մատյանի հեղի փրկման արևմտական բառարանների¹⁸ ընձեռած փաստական նյութի հալանցիկ իսկ համեմատությամբ, այսպես՝ «Ով որ հարվածի իր հօրը կամ մօրը, **մահապարծի թող ենթարկվի**» (Ելք ԻԱ. 15), կամ՝ «Ականջ մի՛ դիր սուր լուրերին։ Տօգուր անիրաի անիրաւ **վկայ մի՛ լինիր**» (Ելք ԻԳ. 1), այդպես էլ՝ «Ասորիների **գօրքի հրամանադար** գեղեցկադէմ Նէմանը... հգօր էր, սակայն՝ բորոպ» (Դ. Թագ. Ե. 1)։

Նայրնի է, որ փրկման արարահայտում է գիտության, տեխնիկայի, մշակույթի, հասարակական կյանքի եզրավորված, ճշգրտված հասկացություն, իսկ այն բառերը, որոնք հասկացություն չեն արարահայտում, փրկման լինել չեն կարող։

Նաև եզրաշինությունը բառաշինություն է, բառապաշարին նոր նյութ մատակարարող ուղի։ Այսպիսից հեղեղում են եզրայինների կազմության, խոսքիմասային պարկանություն, ձևարանական կաղապարների հարցեր։

Նայրնի է, որ հայոց լեզվի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրը բառակազմությունն է, ուստի փրկմանները, որ բառապաշարային միավորներ են, որպես բառեր՝ կազմվում են փոխալ լեզվին հարազատ լեզվական միջոցներով, լեզվի բառակազմական օրինաչափություններով։ Սուրբ Գրքից արդի լեզվին անցած փրկմաններն էլ կազմությամբ համապատասխանում են մեր լեզվի բառալակական կաղապարներին։ Ինչպես բառապաշարում ընդհանրապես, այնպես և եզրաբանության մեջ պարզ բառերը սակավաթիվ են, ինչպես՝ **վկա, գրավ, կրակ, ծով, վեմ, խաչ, հավաք, որով, նարդոս, կորեկ, գինի, ոսկի, անագ, թիթեղ, ածուխ, կրավ, սարդիոն, գմրուխտ, արյուն, կող, ոսկր, ծունկ, սեռ, փենդ, շնորհ, փաճար** և այլն։

Սակայն այս բառերը բաղադրյալ բառ-փրկմաններ ստեղծելու համար «հումք» են ծառայում և մեծ հնարավորություններ ընձեռում, օրինակ՝ «լեղի» փրկմանից կազմվում են «լեղապարկ», «լեղածորան» անափոփական փրկմանները, «կող»-ից՝ «կողոսկր»-ը, «դեղ»-ից՝ «դեղագեղ», «դեղախառնուրդ» և այլն։

Բաղադրյալ եզրայինները բառակազմական փոքրեր կաղապարներ ունեն՝ ա) ածանցավոր, ինչպես՝ **անմեղ, ապացույց, արտաքսում, գողություն, սեփականություն, վերք, կալանք, պարզամավոր, բանտարկել, սպառնալիք, ապրանք, հակաքրիստոս, արդարացում, խորհուրդ, ուռուցք, մահացու, քահանայություն, ավերարանել, խորան, պարտապան** և այլն։

Բառաբարդումը հայերենի բառակազմության արգասավոր միջոցներից է։ Այն նպաստում է գիտական հասկացությունը առավելագույն չափով բառային ձևերին համապատասխանեցնելուն։ Իհարկե, բառաբարդմամբ ձևավորված փրկմանները մի քանի փուլեր են՝ բարդ, ինչպես՝ **ժամկետ, օրենսգետ, մահապարծ, ձերբակալել, մեղադրել, խնամակալ, քաղցկեղ, դեղնախտ, ջրգող, գոհասեղան, փրկագնել**,

17 “Вопросы терминологии”, М., 1961, с. 7.

18 Տե՛ս Ս. Մկրտչյան, Մ. Գյումրյան, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, 1991։

հրեշտակապետ, եղեգնաբար, հովառաշուշան, պարարտանյութ, երկրաշարժ, կշռաբար և այլն:

Նկատելի է հոդակապով և անհոդակապ կազմությունների գուգահեռ առկայությունը, սակայն ակնհայտ է հոդակապով կազմված բարդ տերմինների քանակական գերակշռությունը: Սա, իհարկե, բնորոշ է մեր լեզվի բարդ բառերի կազմությանը:

Բարդ կազմություն ունեցող տերմիններին սերտորեն առնչվում են բարդաձանցավորները, որոնք մեծ մասամբ վերջածանցավոր կազմություններ են: Այս շարքում էլ գերակշռում են -ություն ածանցով բառերը, ինչպես՝ **արյունահոսություն, կարճափեսություն, ուշագնացություն**, նաև՝ **օրենստույց, բռնաբարում, բռնագրավում** և այլն:

Քանակական գերակշռությամբ աչքի են ընկնում նաև բազմանդամ կամ բառակապակցական տերմինները: Ըստ պարունակած բաղադրիչների քանակի՝ սրանք բաժանվում են խմբերի՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ տեսակների, ինչպես՝ **օրենքի գիրք, ակամա սպանություն, Նին Կրակարան, վերջին ընթրիք, Ալֆա և Օմեգա, ձևավորված պտուղ, Քրիստոսի երկրորդ գալուստ, Սուրբ Նոգու շնորհներ, Աստուծո յոթնորդ Նոյի հետ, Տիրոջ ութնորդ Դավթի հետ** և այլն:

Նշենք, որ ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր տերմիններում կատարվում են հնչյունափոխական նույն երևույթները, ինչ հայոց լեզվի նույն կազմությունն ունեցող ընդհանուր գործածության սովորական բառերում, ինչպես՝ խուզարկել (խույզ-խուզ) - ույ>ու, բռնաբարում (բուռն>բռնի) - ու>ը, նվիրաբերություն (նվեր>նվիր) - ե>ի, արվամուլ (արու>արվ) - ու>վ, ինքնասպանություն (ին-քն) -ը և այլն:

Բաղադրյալ տերմինները ձևաբանական կաղապարների տեսակերից եւս չեն տարբերվում սովորական գործածության բաղադրյալ բառերից: Դրանք հանդես են գալիս գուգորդումների բազմազանությամբ, ինչպես՝ գոյական + գոյական, օրինակ՝ մահապարիժ, ողբերգություն, գոյական + բայահիմք, օր.՝ մեղադրել, ոտնուկ, ձեռնադրություն, ածական + գոյական՝ նորահավաք, դեղնախոտ, պայծառակերպություն, թվական + բայահիմք՝ յոթնօրինեք, ածական + բայահիմք՝ կարճատևություն, մակբայ + բայահիմք՝ բռնագրավում, դերանուն + բայահիմք՝ ինքնասպանություն: Իհարկե, տարածվածության և կենսունակության տեսակերից կաղապարները տարբեր են, և ավելի տարածված են գոյական + գոյական, գոյական + բայահիմք կաղապարները:

Տարբեր են նաև բազմանդամ տերմինային կապակցությունների ձևաբանական կաղապարները, ընդ որում դրանք (տվյալ դեպքում երկանդամները) շարահյուսական տարբեր կապեր են ենթադրում՝ հարկացուցիչ-հարկացյալ, որոշիչ-որոշյալ, ինչպես՝ դատարանի վճիռ, ծանր հանցանք և այլն:

Ամենափարձված ու կենսունակ կաղապարը գոյականի սեռական հոլով + գոյականի ուղղական հոլով կառույցն է, ինչպես՝ **օրենքի գիրք, ունեցվածքի հափշտակում, սպանության մասնակից, Ղազարոսի հարությունը, Տիրոջ Մկրտությունը, Ավետման փոռ, հարսանիքի ընթրիք** և այլն:

Շատ տարածված է նաև ածական + գոյականի ուղղական հոլով կաղապարը,

ինչպես՝ **ակամա սպանություն, Նին Կրակարան, Նոր Կրակարան, կուսական ծնունդ, հրեշտակային բախում, հագարամյա թագավորություն, վերջին ընթրիք:**

Նկատելի է, որ նման փերմինների ծավալիչները կարող են լինել և՛ որակական, և՛ հարաբերական ածականներ: Մյուս կաղապարները զգալիորեն զիջում են բերվածներին, օրինակ՝ գոյականի ուղղական հոլով + ենթակայական դերբայ՝ **քաղաքացիություն չունեցող**, հարակապար դերբայ + գոյականի ուղղական հոլով՝ **ձևավորված պարուղ**, թվական + գոյականի ուղղական հոլով՝ **փաստ կույսեր**, կան նաև գոյական + շաղկապ + գոյական կառույցներ, ինչպես՝ **Աղամ և Եւա, Ալֆա և Օմեգա**, գոյականի սեռական հոլով + թվական + գոյականի ուղղական հոլով՝ **Քրիստոսի երկրորդ գալուստը**, ածական + գոյականի սեռական հոլով + գոյականի ուղղական հոլով՝ **Սուրբ Նոգու շնորհները:**

Եռանդամ եզրակապակցությունների անդամների միջև առկա են ինչպես համադասական, այնպես և սպորադասական հարաբերություններ:

Կան նաև «լինել» բայի հարադրությամբ ձևավորված եզրույթներ, ինչպես նաև կապային կառույցներ, ինչպես՝ **դադված լինել, անվավեր լինել**, կամ՝ **Աստծո ուխտը Դավթի հետ**. Բերված օրինակների ձևաբանական կաղապարը նույնն է՝ գոյականի սեռական հոլով + գոյականի ուղղական հոլով + գոյականի սեռական հոլով + կապ:

Տերմինների թվարկումն իսկ բավական է մեկ անգամ ես համոզվելու, որ Աստվածաշունչն սկզբնաղբյուր է կյանքի բոլոր ոլորտներին վերաբերող գիտելիքների և հմտությունների համար, իսկ դրանք ձեռք բերելու կարիք մարդկությունը շապ ունի, ուստի ուսումնասիրողների համար լայն ասպարեզ կա: